

ԻՐԱՅՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պաշտոնային համար Տարեկան 12 ֆր.
» Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մեկ ծաւառով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՅՈՒՆՔ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պաշտարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն դրկուիր եւ յարմար դատարաններ միայն կը հրատարակուին աւանդովին կամ մասամբ:
Իրանացեալ տղը 20 սանթիմ. երեւեկն աւելի անգամներու համար 20 օրոք կը շինի:



ՄԱՅԱԳՈՅԺ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆԻ

Պաշտոնային յուլիս 26 թուակիր հեռագրով մեզ կը գումարն Յարու. թին Չաքրեանի մահը. մանրա. մասնութիւնք առ այժմ կը պակսին:

Հայրենիքի ազատութեան սուրբ գործին այդ վաղեմի անձնուէր զինուորը զրիթէ ամեն հայու ծանօթ է. Ս.Յ. ճշմարիտ Չէյթունցին իր երիտասարդութեան ատեն խիզախ եւ յանդուգն ապստամբա. պետ մը եղած է. Չէյթունցի ապառաժներուն վրայ իր քաջարի հայրենակիցներով երկար ատեն կուրծք տուած է թուրք կռաւ. վարութեան բռնութեան դէմ՝ պատերազմներու մէջ մտած ելած՝ բանտերու խորը շղթաներ կրած ու վէրքերու սպիներով իր մարմինը պնդազարդած է. Նա այդ սպիներով միայն ինքզինքը երջա. նիկ կը զգար: Վերջին տարիներս իր հիւանդոտ վիճակին մէջ իր միակ միւթարութիւնը իր հին գործու. նէութեանց յիշատակներուն մէջ կը կայանար: Հայրենիքի վերջին աղէտներն զինքը շարունակական թախծութեան եւ յուզմանց մէջ ձգած էին: Հակառակ 60 տարի. ներ բոլորած ըլլալուն, հակառակ իր հիւանդոտ վիճակին եւ հակառակ յիշատական անձկութեանը միշտ եւ ամեն վայրկեան խօսքերը իր մտքին մէջ պատրաստած ծը. բազրի մը գործադրութեանը վրայ կը դառնային. Նա կը մտածէր միշտ ու եւ ճամբայով Չէյթունցի երթալ. իտէալն էր ապստամբութեան մը գլուխը կանգնել. նա հակառակ էր մեր յեղափոխական կուսակցութեանց մասնակի շար. ժումներուն, այդ շարժումները անխորհուրդ կը գտնէր ու վերջին

աղէտները անոնց կը վերագրէր. իր այս համոզումը արդէն հրա. պարակած է անցեալ երկու տա. ւոյ մէջ հրատարակած կառակ եւ Տաշրոս թերթերովը:

Այս պատճառաւ վերջին տարի. ներ իր հակառակորդները շատ. ցած էին. բայց ամենակատաղի հակառակորդն իսկ իրեն անկեղծ աղագսէր մը ու անձնուէր հայրե. նասէր մը լինելն չէր կարող ու. բանալ. Չաքրեանի մեծութիւնը ահա ասով կապացուցուի:

Վառնայի երիտասարդութիւնը այդ անձնուէր հայրենասէրին ան. կեղծութեան նկատմամբ իր վա. տահութիւնը եւ յարգանքը վերջին անգամ ալ յայտնեց, անոր ինը. պատմութեան ներկայացում մը տալով, որմէ գոյացած ար. դիւնքը յատկացուեցաւ զինքը Պաշտոնային շղթաներու որպէսզի հոն մասնագէտ բժիշկներու ձեռքով դարմանուի: Բայց աւաղ հեռագր. րը գումարն էր Չաքրեան ալ չի ապրիր, նա երկուշաբթի օր մե. ռած է:

Թարգմանք իր յիշատակին...

ՏԻԱՐ ԶԵՐԱԶԻ

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

— ԽՈՒ —

Ստացանք Տիար Մինաս Զե. րալի Ամսթերտամի մէջ խօսած ճառը պարունակող տպուած տետ. րակ մը: Ատենաբանը իր սովորա. կան պերճախօսութեամբ Հայաս. տանը ու հայոց ներկայ վիճակը նկարագրելէ եւ հայկական խնդրին ծագումը բացատրելէ զատ, հայ ժողովրդեան գրական, կրօնական եւ արդիւնաբերական յատկութիւննե. րը թուած ու պարզած է կեն. դանի գոյներով. կոտորածներու քստմնեցուցիչ նկարագրութիւննե. րը ըրած եւ դեղին ու կապոյտ տետրակներով ըսածները հաստա. տած է: Հայ ժողովրդեան խաղաղու. թեան զեւապանաժողովին դիմումին գալով հետեւեալն ըսած է:

«Ինձ ըսին թէ՝ զեւապանաժո. ղովին մասնակցելու համար պէտք է բանակ եւ ծովային զօրութիւն ունենալ, Հայաստանը ունի՞ այս

բաները: Պատասխանեցի, այո՛, բանակ մը ունինք 300,000 մար. տիրոններու, ունինք նաեւ ծովա. յին զօրութիւն մը Վօսփորի յա. տակը:»

«Ես խաղաղութեան զեւապանա. ժողովի ատեն եկայ, որովհետեւ պահանջատէր մը կը փափաքի իր պարտապաններու խնճոյքին միջո. ցին վրայ հասնել: Ես խաղաղու. թեան զեւապանաժողովի ատեն ե. կայ, որովհետեւ Ռիւ Պլաս պէտք է որ որսերու բաժանման միջոցին վրայ հասնի, ըսելու հա. մար. «բարի սխորժակ, պարոն. ներ: Դու Տաճկաստանէն Պաթու. մը, կարսը եւ Արտահանը խլեցիր, դու Պօստան ու Հէրսէքը, դու Կիպրոսը եւ Եգիպտոսը, դու Թու. նուսը, դու վաճառականութիւնը դու երկաթուղիները, եւ դուք Հայաստանը պաշտպանելու համար չորս դաշնագրեր ստորագրելէ վերջ զանի կը լքանէք շան մը պէս ճաթելու վիճակին մէջ, Ես եկայ խաղաղութեան զեւապանաժողովի ատեն, որովհետեւ մեզ շարժող. ներն ալ ներկայացուցիչներ զրկե. ցին հոն, ինչ որ Հայաստանը ստիպեց իր զաւակաց մին փու. թացնել յիշեցնելու աշխարհի թէ «Արաբիոյ բոլոր անուշահոտու. թիւնը չի բաւեր արեան այս հո. տը ապանեխելու»: Եթէ թուր. քերու դիւրագրգռութիւնը մեղ. մացնել պէտք է, նոյն պէտք է եւ Հայոց համար: Հոլանտա չէր կրնար դահիճներու ներկայացուց. չին առջեւ իր դռները բանալ եւ զօհուողներու առջեւ գոցել:»

Գետոյ Տ. Չերազ խօսքը թա. գուհին ուղղելով անոր բարեմաս. նութիւնները թուած, ու սա խօս. քերով վերջացուցած է ատենախօ. սութիւնը:

«Ծանուն մեր 300,000 նահա. տակներու մարերուն, կիներուն, բոյրերուն եւ աղջիկներուն, ծնրա. գրելով կաղաչեմ քեզ մի թողա. տրեր մեր դահիճներու ներկայա. ցուցիչներուն որ քու հրեշտակա. յին սպիտակ ձեռքդ իրենց շըրթ. ներուն մօտեցնեն: (քոչաւ ծափեր)

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ՉԵՐՄ (Սըրմա)

Ճահնային Տենդ (Փիկվոր քաղաքէն)

— ԽՈՒ —

(Շարունակութիւն 53 քիւէն)

Չերմի երրորդ տեսակն՝ տե. սակ մը մարմնոյ ընդհանուր թու. նաւորում մըն է (քաշէքսի կամ էնթօքզիքսիօն բալիտէն) որ հինցած ջերմ ալ կրնայ կոշուիլ (էն բալիտիզմ քրօնիք) այս տեսակը հիւանդութիւն մը ըլլալէ աւելի, մարմնոյ ընդհանուր ախտացեալ մէկ վիճակն է եւ ընդհանրապէս երկու կերպով առաջ կրնայ գալ կամ երկար ատեն վերոյ նշանա. կեայ ձեւերէն միոյն այսինքն մի. քանի ամիսներ ջերմ հիւանդու. թեան ենթարկուելով, եւ կամ եր. կար ժամանակ ջերմոտ տեղ մը բնակելով օգին մէջ գտնուած մի. ազմ ըսուած թոյնը չնշելով, կամ միազմ պարունակող ջուր գործա. ծելով, այս վերջին պարագային հիւանդը գաղտնի կամ յայտնի ջերմ չունենար միմիայն տակաւ առ տակաւ մարմինը թունաւոր. ուելով օր մը ամբողջութեամբ ե. րեւան կելլէ իւր ծանր հետեւանք. ներով միասին:

Տակաւ առ տակաւ հիւանդին փայծաղը (տալաք) կըսկսի մեծ. նալ, եւ կրնայ շատ անգամ մինչեւ պորտը եւ աւելի վար ալ իջնալ, եւ ծանրութեամբն աղիքներուն վրայ բեռ մը ըլլալ, նոյնպէս լեարդը (քարաճիկէր) եւս կը մեծնայ եւ ստամոքսը ճնշելով կը նեղէ, հի.ւանդին ախորժակը կը գոցուի ստամոքսի եւ աղեաց անմարսողու. թիւն ու ցաւ եւ անզօրութիւն կը. զգայ, արիւնը կը նուազի, ան. քունութիւն, գլխու պտոյտ եւ սրտ. նեղութիւն կունենայ, արեան մէջ գոյացած տեսակ մը մութ գոյն բիծերէն մարմինը հողի գոյն կըստանայ որ արեան պակասու. թեամբ յառաջ եկած գունատու. թեան հետ միանալով աւելի սեւի մօտ գոյն մը կառնէ. ասոնցմէ վերջ կըսկսի ոտքերու եւ փորին եւ շատ անգամ ամբողջ մարմնոյ աւելի կամ պակաս ջրգողութիւնը (խթիպքա. սըսքա), նմանապէս

Ղզախին ցաւեր (նէվրիտ) անպակաս են և երբեմն ալ ստամոքսին կը-
րած նեղութենէն և մանաւանդ
մէջին (իտորար) անբաւականութե-
նէն յառաջ եկած մարմնոյ թու-
նաւորութենէն փսխումներ ալ կունեն-
նան. ընդհանրապէս եթէ ժամա-
նակին պէտք եղած խնամքն ու
դարմանը չը տրուիր յայնժամ ծե-
րերու պատահածին նման վերջնա-
կան թոքատապն (կէօքիւս սաթ-
լիճանը) գալով կը մահացնէ:

Ինչպէս տեսնուեցաւ ջերմ հի-
ւանդութիւնը կարծուածին չափ
թեթեւ հիւանդութիւն չըլլալէ
զատ շատ անգամ ալ մահացու է.
իւր ամենապարզ վիճակին մէջ իսկ
կրբ քիչ մը անհոգ վարուելով
անդարման թողուի տնմիջապէս
արեան պակասութեան փայծաղի
և լեարդի մեծնալուն և հետեւա-
պէս առաւել կամ նուազ ամբողջ
մարմնոյ խանգարման պատճառ
ըլլալէ զատ, աւելի ծանր հիւան-
դութեան մըն ալ կրնայ տեղի
տալ. ըժշկականութեան մէջ հա-
զարաւոր հիւանդութեանց պատ-
ճառներ փնտռուած ժամանակ
հաստատուած է որ ջերմը (բա-
լիտիզմ) միշտ գլխաւոր պատճառ-
ներէն մին է, այսինքն լեարդի:
սրտի, կործքի ուղեղի երկկա-
մունքի (պէօլթէկ), ստամոքսի աղ-
եաց, փայծաղի, արեան և շնչի-
րակներու (կարմիր արեան երակ,
աւթէն) ոսկորներու կործքի ալ
եւ ալ տեսակ տեսակ հիւանդու-
թեանց գլխաւոր պատճառներէն
մին ջերմը ըլլալը ապացուցուած
է. ուստի աւելորդ է կրկնել թէ
պէտք է զգուշական ամեն միջոց-
ներ ձեռք առնուլ անկէ զերծ մը-
նալու համար և հակառակ պարա-
զային երբ այդ ախտէն մէկը
բռնուի պէտք եղած անմիջական
միջոցներն ընելով ըստ կարելոյն
հաւանական եղող հետեւանքներէն
հեռի մնալ ջանալու է:

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (29)

ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՅԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

— Խ.Օ. —

ՄԱՍՆ. Բ.

Այսպէս կը մտածէր մեր Ակնեցի ե-
րիտասարդը եւ կը տխրէր: Վահրամի
համար տխրիլը Հրանդը միտքը բերել
կը նշանակէր. Հրանդին անմիջապէս
կը յաջորդէր Ակնը ու Հայաստանը:
Յանկարծ յոյսի եւ ոգեւորութեան կը-
րակով կը վառուէր.

«Այո՛, այո՛, հազգին զօրաբու-
թիւններ կան, բայց բոլոր մը իսկ կե-
նալը աններելի ոճիր է. Ակնի մէջ,
ես իմ մասին խօսելով առաջադրեցի:
գործեցի եւ յաջողեցայ՝ միեւնոյնը հոս
ալ ընելէ չպիտի յապաղիմ. կը յուսամ
որ հոս ալ իմ չափովս օգտակար պիտի
ըլլամ նորահասներն եւ մեր ազգային
գաղութին նպաստաւոր ըլլալիք խմբակ-
ներ պիտի կազմուին որոնք հայրենա-
սիրական գաղափարի աւելի արագորէն
ամեն շրջանակի մէջ ծաւալելուն
պիտի սատարեն:»

Պոլիս գալ ու հաստատուելէն երեք

թէ ինչ զգուշական միջոցներ
ունիմք ջերմէ զերծ մնալու հա-
մար.

Ինչպէս ըսինք գոլորշիացեալ
վիճակի մէջ գտնուող միազմը ե-
րեկոներ արեւուն մարը մտնելէն
վերջ խտանալով կրկին վար կիշնէ
հետեւապէս ամենէն փաստակար
ժամանակն երեկոներն է ուստի
ըստ կարելոյն նոյն միջոցին դուրս
գտնուելէ զգուշանալու է ինչպէս
նաեւ ամեն անոնք որ առաւել կամ
նուազ ստիպեալ են ճախճախուտ
տեղումները գտնուելու, խմելու
համար եռացեալ ջուր գործածե-
լու են անոր ջուրով ներմուծուած
ազատ կը մնան. բնակարաններն
քաղաքին կամ տեղւոյն այն կող-
մերն ըլլալու են որ ճահիճին վրայէն
եկող ուղղակի հողմէ զերծ մնան. զօր-
օրինակ վառնայի թաշ հօլի կո-
չուած պոլսոտային՝ ծովէն վեր
ելնելով ձախ կողմի բնակարան-
ներն մանաւանդ լիճին աւելի մօտ
գտնուող տուններու բնակիչներն
շատ աւելի ենթակայ են ջերմի
քան ալ կողմի և կամ աւելի հե-
ռուն գտնուողներն, նոյնպէս ջա-
նալու է պառկելու համար բարձր
յարկեր ընտրել և գիշերը պառ-
կած սենեակն բաց պատուհան չը
թողուլ: Նմանապէս չափազանց
յոգնեցուցիչ աշխատութիւններէ
հեռի մնալու է և միշտ ստամոքսը
պարապ դուրս ելնելէ զգուշանա-
լու է, ինչպէս նաեւ շատ զօռա-
րամարս ուսուցիչներէ, տհաս և
չը լուացուած պտուղներէ:

Ամեն անոնք որ ստիպուած են
ջերմոտ տեղերն կամ անոնց շատ
մօտն աշխատելու, լաւ է որ գոնէ
շաբաթը մի անգամ սօլֆատօ գոր-
ծածեն, չափահաս և զօրաւոր
կազմ ունեցողներու համար կէս
կրամէն մէկ կրամ կրնայ գործա-
ծուիլ կէսը երեկոյին կէսը առա-
ւօտուն կանուխ առնելով. նոյն-
պէս յանձնարարելի է երբեմն

ամիս ետքը, մեր՝ Պոլսի մէջ ազգային
ու հանրային գործիչ նկատուած միջակ-
ներու հրապարակագիրներու եւ ուսու-
ցիչներու մեծ մասին հետ ծանօթու-
թիւն ունէր, ասուպի մը ազգեցու-
թիւնը ունեցող ծանօթութիւն եւ իր
ունեցած հանդիպումներուն մէջ ամեն
ստիժով գաղափար եւ նկարագիր կը
քարոզէր մտած եղած վարժարաններուն
եւ ընկերական շրջանակներուն մէջ.
Պոլսի մէջ ուսուցչութեամբ հաստատ-
ուելէ ետքը իր առաջնորդը եղաւ տի-
պար ընթերցանութիւնը ուր ընտրո-
ղութիւնը մեծ դեր կը խաղար:

Վահրամ աշխատակցեցաւ Պոլսահայ
թերթերէ մի քանիին. անոր լեզուն
ամպի ծռէններու ծովի խաժ ալիքնե-
րուն, գարունի եւ աշնան հոգեզմայլ
տեսարաններու հետ խաղացող զրա-
գէտներու անընդունելի եղաւ. չէ՞ մի
որ ցնորաբանութիւններու փաստաբան չէր
այդ տղան. Պ... թաղի վարժարանին
մէջ Պէրպէրեան անուն ողորմելի մը
հեղինակ գիրքը. բայց իր մէկ լուրջ
պատասխանը, թունդ համոզումով ա-
կաղծուն լուծութեան գաղափարաց
զայն. հոն եղողները զգացին որ թէեւ
երիտասարդ եւ գաւառացի բարոյական

մանաւանդ երեկոներ շատ քիչ
քանակութեամբ քօնեակ կամ օդի
գործածելն, ինչպէս նաեւ ստամոք-
սի թեթեւ անմարսողութեանց հա-
մար ալ տունկերու լիզի արմատները
գործածելն շատ օգտակար է:

Ի. Բ. Թ.

(Շարունակելի)

ԹՂԹԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆիլիպպէ, 23 յուլիս 99

Շարժում լրագրոյ 145 թուին մէջ
ՇԱՀԱՊ ստորագրութեամբ յօդուած մը
կարդացի, որով յօդուածագիրը Ֆիլի-
պպէի թաղ. խորհրդոյ քուէարկութեան
մասին պակաս մը կը լրացնէր Տօքթ.
Փափագեանի անձին դէմ անպատշաճ
ակնարկութիւն մը ընելով, իբր թէ
նա համալի ֆուէն չէ ընդունած նոյն
օրը: (*)

Ուստի արժան կը համարինք երկու
խօսքով վերոյիշեալ յօդուածագրոյն սը-
խալը ուղղել և անկողմնակալութեամբ
ճշմարտութիւնը յայտնել:

Ընտրողական ժողովը որուն անդա-
մակցած էր յիշեալ յարգելի բժիշկը ի-
բր Ատենադպիր. 5-6 նիստ զոհած էր
միմիայն առանց ընտանեաց անդային-
ները չզրկելու համար իրենց ընտրող
լիւնդու իրաւունքէն, հակառակ Պատ-
րիարքարանէն նոր եկած հրահանգին,
որ ըստ Սահմանադրական տրամադրու-
թեան անխտիր կը զրկէր ամեն պան-
դուխտ ազգայինները:

Վերջապէս ժողովը ամեն խոռովու-
թիւն մէջտեղէ բաժնալու և համե-

(*) Քուէարկութեան միջոցին ոչ ոք
ընտրողական ժողովոյ անդամներէն
արտասանած չէ այդ «համալի» բառը. ասի
Շահապի ինքնաշնորհ մէկ բառն է, ին-
տրողական ժողովոյ անդամը որուչուն
հաղորդած են մէկ քանի խոռվարարաց
որ ի վերջոյ ժողովրդակալութիւն չա-
հելու նպատակաւ հրապարակ նետած
են համալի ֆուէն չընդունուի իր խօս-
քը, որով կը յուսան զարձակ Փ. Պոլ-
սոյ ազգային հորիզոնն միմայնել, բայց
երբէք չպիտի յաջողին, քանի որ տյը
տեսակ խոռվարարաց զիմակներն վար-
ագնուելով պէտք եղած դասը արաւե-
ցաւ իրենց եւ արքանեակներուն:

որոշ սկզբունք ունէր. բան մը որ
Պոլսոյ ուսուցիչներէն շատ քիչն ու-
նին. անկից ետքը անոր համբաւը ու-
ժողցաւ եւ հետզհետէ զինքը ճանչցող-
ները աւելի յարգանքով վերաբերուե-
ցան անոր հետ. Պէրպէրեանը որ «մը-
տացի եւ զարգացածի երեւոյթով գիրք
ու տեսարաններու միբճուած անասուն
մըն է» ընդլու աղտոտ համարձակու-
թիւնը ունէր քանի Վահրամի կը հախ-
զիպէր զլուսը խոնարհելու կը պար-
տաւորէր:

Պոլսի թաղերը իրեն համար մութ
անկիւն չունէին. մանաւանդ ակնցի
ազգայիններ բնակող թաղերը. եւ ո՞ր
կը պակսի գործունեայ ակնցին. հոն
ուր լաւ հայ մը դուրս բերելու հաւանա-
կոնութիւններ կը նշմարէր խօսքի ծով
կը կտրէր եւ տեսնուէր արժանի էր թէ
ինչպիսի համոզկեր եւ քաղճր լեզուով
մը իրեն հետ տեսնուողները զի թեւով
կը ջանար զանոնք ազգային դատով
հետաքրքրել և անոր ուժով կապել:

Երիտասարդներու հետ իր ունեցած
ծանօթութիւններէն ամենէն միմայն-
րականը եղաւ Լեւոն Պողոսեանինը,
շատ եղական հանդիպումով մը. 89ի
յունիսին իր բնակութիւնը Պէշիքթաշ

րախուութիւն գոյացնելու համար յան-
գեցաւ սոյն որոշմանը թէ՛ «այն ազ-
գայինը» որ թէեւ առանց ընտանեաց
կրնան ընտրող եւ ընտրելի լինելու ի-
րաւունքը վայելել, եթէ երկու տարիէ
ի վեր քաղաքս հաստատուած են ոչ ոք
գործով մը:»

Ըստ այս որոշման ընտրողական ժո-
ղովը ընտրողաց ցանկէն դուրս ձգուե-
ցան այն ազգայինը՝ որք տան եւ վա-
ճառատանց մէջ սպասաւոր-բեռնակիր
են եւ ամեն անոնք որ ոտքի վրայ
անհաստատ գործով մը կը բաղին: Հե-
տեւապէս ոչ միայն հայաստանցի իւս-
ւնալը զրկուեցաւ քուէարկութեան ի-
րաւունքէն, այլ եւ իսկ մը ազգայինը
պոլսեցի, որոնց մէջ էր թերեւս յօդ-
ուածագիրն ալ:

Ուստի սխալ է այն խօսքը թէ Տօքթ.
չէ ընդունած համալի քուէն (*). ասի
յերիւրեալ զրպարտութիւն մէջ, անոր
պատիւը արատաւորելու համար, յանի
որ նա էր որ երկու հակառակ կաւալ-
ցութիւնները համաձայնեցնելու եւ հա-
մեքալիութեամբ ընտրութեան օրինա-
ւոր արդիւնք մը ձեռք ձգելու համար
ամեն ճիգ թափեց, «ընտրողական ժո-
ղովոյ անդամք իսկ կրնան վկայել»,
այնպէս որ քաղաքիս պատուաւոր և
չէզոք անձինք իրենց շնորհակալութիւ-
նը անոր յայտնեցին հրապարակաւ նոյն
օրը:

Յիշեալ յօդուածագիրը գովեստ կը
չաւլէր Տիար Բաղարճրգլեանի, իբր
թէ անոր համոզկեր խօսքերով իաղա-
ղութիւնը (*) վերահաստատուած էր
եւ քուէարկութիւնը շարունակուած.
սխալ եւ սուտ է այս. զի յիշեալ ան-
ձը՝ որ առաւօտեան դէպքին ներկայ
չէր, այնչափ յուզից ընտրողական սը-
րահը դիմող ազգայինները, որ մինչեւ
անգամ նախագահ հայրն սրահէն մեկ-
նեցաւ վշտացեալ եւ քուէատուփն ալ
կոտորուելու սպառնալից ներքեւ մը-
նացած էր:

Բարեբաղդաբար ընտրողական ժողո-
վը վճռական որոշում մը տուաւ. քուէ-
տուփն յղել նախագահ հօր խօսքը եւ
քուէարկութիւնը զողորհեցնել: Այս ո-
րոշման վրայ Բաղարճրեան ճարահատ-
եալ, հանդարտեցուց ամփոխը իրեն մի
քանի համախոհներով, որոնք անձայն
համակիրակցեցան ընտրողական ժողովոյն
վերոյիշեալ որոշմանը եւ կամաւ զըր-
կուեցան իրենց քուէ տալու իրաւուն-
քէն, որոյ պատճառաւ իսկ հաւաքեալ

եւրազ փողոցը փոխադրեց ևս պոլոչ
բութիւն ըրած էր Կալաթայէ Պէշիք-
թաշ ձգուող պողոտան, երբ օդը նե-
րեր, քալելով կտրել. Լեւոն Պողոսե-
ան որ նոյն թեւականին պոլսի կողմը
հայ վաճառականի մը քով գրապու-
թիւն կընէր եւ Պէշիքթաշ կը բնա-
կէր երեկոները Վահրամի եղանակով
տուն դառնալու սովորութիւն ունէր,
ամեն օր մէկգլմէկ կը տեսնային եւ ի-
րարու ներկայանալու զարմայալի բու-
ռն տենչով մը տողորուած էին երբ
89ի օգոստոսին վերջապէս այդ բանը
տեղի ունեցաւ Տօլմապաշէի քարափի
հետեւը տարածուող մարգերուն վրայ
լրագրական ցրուիչ հայ երիտասարդի
մը միջամտութեամբ որ Լեւոն Պողոսե-
անի ծանօթ էր եւ Վահրամին: (*)
Լրագրիւր կը հայթայթէր:

Վահրամ միակ երիտասարդը գրաւ
Պողոսեանի մէջ որուն գործակիցը ե-
ղաւ որքան ատեն որ այս առաջինը
պոլսի մէջ մնաց իսկ անոր նիւանալէն
ետքը ինքը շարունակեց իր գործը մաս
ունենալով ուղղակի ամեն ցոյցի կամ
շարժումի:

Շ. Կամարապետ

Շարունակելի

էին, միայն եւ միայն խոստովանելու մը
յարուցանելու զիտմամբ:

Երկու խօսք ալ տխրահոգակ անտա-
նելի վարդօրն:

Մենք մօտէն կը ճանչնանք բոլոր
տխր փափազեանք եւ անոր հաշտա-
րար ոգին, զի քսան տարիէ ի վեր մի-
լիպէի մէջ հաստատուած միշտ վար-
ժարանաց բարեկարգութեանը նախան-
ձախնդիր եղած է:

Նա էր որ Լա Հէյի դեսպանախոր-
հուրդին մատուցանելի բողոքագիրը
ստորագրել տալու համար կազմեալ մի-
թիւնիկն նախագահեց նոյն իսկ Դաշ-
նակցական խմբին հիւսիսարանք, եւ
նա էր դարձեալ որ վերջին ժամանակ-
ներս միշտ ջանաց երկու կուսակցու-
թիւնները համաձայնեցնելու վարժա-
րանի խնդրոյն համար:

Վարդօ՝ որ չճանչնար զանի, անվա-
յել բառեր կուզէ անոր, ինքը կա-
տարեալ անտեղեակ ազգային գործոց
եւ առանց գիտնալու թէ այն պան-
դուխտ հայաստանցին Պոլսոյ մէջ միշտ
զրկուած էր քուէ տալու իրաւունքէն:
ըստ արամտորութեանց Սահմանադրու-
թեան, նոյն իսկ Արաթիոյ այն եկե-
ղեցւոյն մէջ, որուն մէջ իրաւամբ
սեպակաւն ժողովուրդն էր ժամանակ
մը. հանգուցեալ փափազեանի քթին
տակ, ելիւր ալժամ նա խրատներ կը շե-
ռայէ իր հիւանդ ուղիղով:

Լաւ կըլլար եթէ հայկական շահերը
թաղային շահուց հետ չչփոխէր եւ Ար-
մէն վարդապետը իրեն միջոց ընելով
իր համախոհները չթիւրադէր երբեմն
միլիպէի վարժարանը կործանելու,
վասնզի իր գաղափարակիր մէկ անձը
դատաւոր չը կարգուեցաւ հոն:

Որտաւ մալ կուտանք այդ ճամար-
աւիկն որ ամեն ստայօք զրպարտու-
թեանց շաւտով հաւատք չընծայէ եւ
թողու միլիպեցեալն օձիքը որ հազիւ
կրցած է խաղաղիլ նորակազմ Թաղ-
խորհրդոյ ընտրութեան շնորհիւ:

ԿՈՐԻԻՆ

Ա.Ռ.Պ. ՊԻՈՆ

Շարունակութիւն 53 քիռէն

Հաւանական է որ ասկէ մի քա-
նի տարի յետոյ, մեր այս տար-
ւան քննութիւններուն ունեցած
մէկ երկու ներկայներն ալ չունե-
նանք, այն պատճառով որ ծնողքը
իւր տեղը լրացուած պիտի տեսնէ
ուրիշով մը. նա հաստատապէս
պիտի գիտնայ որ իւր գուկին
դաստիարակութիւնը յանձնուած
է իւր կողման լիովին արժանի,
իր ձեռքը լուալիլիէ կամ բարձ-
րագոյն վարժարանի մը վկայա-
կանը ունեցող մէկու մը, վերջա-
պէս դաստիարակի մը որ ուսում-
նական ու իցէ մարմնոյ մը կողմէ
վաւերացեալ ըլլայ: Երբ մեր դա-
սաւորները առանց բացառութեան
այսպէս կընտրուին, իրենցմէ եր-
կուքը, երեքը կամ աւելին միա-
նալով դարձեալ կը կատարեն այն
պաշտօնական քննութիւնը, ինչ
որ կընէին առաջ օտարներու ալ
ներկայութեան. բան մը՝ որ հա-
ւասարապէս կազդէ աշակերտին
վրայ:

Քննիչ օտար ամբոխ մը՝ այն
ատեն միայն վնասակար պէտք է
ընդունինք, երբ սա կը պարու-
նակէ իր մէջ անանկ մարդիկ, որք
բառին բովանդակ նշանակութեամբ
անուս ըլլալով կերթան աշակեր-

տին միայն քիթն ու բերանը աշ-
քէ անցնել. մարդիկ՝ որք ըլլա-
լիք հարցումներէն, աշակերտի մը
ծրագրէն ու կարողութենէն բոլո-
րովին անտեղեակ կերթան իրենց
ուժը փորձել խեղճ աշակերտին
վրայ, անոնց աներեւակայելի հար-
ցումներն առաջարկելով:

Որքան թիւիւ եւ հարեւանցի
մատածութիւն է որ կըլլայ, երբ
քննութիւնները առ հասարակ ա-
մեն տարիքի ալ անհրաժեշտ ու
օգտակար է կըսուի, յանկարծ
Չինական վարժարանը միտք բե-
րելով՝ քանի որ անոնք ալ մեզի
պէս կը քննեն, անոնք ալ մենք
ալ տիեզերքին վրայ ամենէն աւե-
լի կարող ճարտասանները պատ-
րաստելու ենք կըսուի: Արդեօք
մեր, Չինական ու Նոնօրինակ
վարժարաններու յետադիմութեան
պատճառները եւ կամ կոռուտա-
յի էսքիմացիներու քով կարճ յի-
շուցութեան ու սահմանափակ մտքի
մը գոյութեան բուն շարժառիթը
միայն քննութիւնները պէտք է
նկատել:

Պահ մը ես ալ ձեզ հետ քննու-
թիւններու շնորհիւ կը խորհիմ.
սակայն չեմ գիտեր թէ ասով պի-
տի կրնանք մեր աշակերտները
անանկ նախաձեռնի վիճակի մը
մէջ դնել, որ իրենց հաւասարող
չըլլայ:

Երբ կընդունէիք թէ՛ մենէ շատ
աւելի քաղաքակրթեալ Եւրոպայի
զոնապէս կէտերուն մէջ ալ կը
քննեն (ինչ նպատակաւ որ կուզէ
ըլլայ). երբ կըսէիք թէ՛ այդ քնն-
ութիւնները շատ տարբեր եղա-
նակաւ կըլլին քան մերինները.
ինչո՞ւ համար ուրեմն մեր քննու-
թիւնները տակաւ առ տակաւ ա-
նոնցին նմանցնելու աշխատել
առաջ, կենէք վճռողական կեր-
պով քննութիւնները վերցնելու:
Երբ քննութիւնները վերնալու
խնդիրը Եւրոպայի համար իսկ
ապագային մէջ իրականապէս է կը-
րսուի, ինչպէս ուրեմն մենք կը-
նանք այժմէն գործադրել ատի-
կայ. միթէ՞ Եւրոպան ալ անցնի
կուզենք, շիտակը այդ ալ անկա-
րելի չէ. . . .

Հոս միջանկեալ կերպիւ կըսեմ
որ իմ ծածկանունի տակ երեւնալս
երբեք ձեզի վերաբերութիւն չու-
նի. ուստի կը շարունակեմ նոյնը
ստորագրել:

Չմոռցուի ըսել թէ՛ քննու-
թիւնները ֆիասակար ընող պատ-
ճառներէն մէկն ալ Յունիս ամսոյ
պաքերն են եղեր. իբր թէ այս
ամսոյ մէջ քննութիւն կատարուիլը
պատգամ երկնից եղած ըլլար:

Պ. Պիոն կըսէ թէ՛ քննութիւն.
ներք դասատուի մը բարոյականի
ոյժն ալ կը պակսեցնեն. ասիկայ
բաւական արտառոց կերեւի մեզ:
Բայց ո՞չ, ճարտար ուսուցիչ մը
ապեն պարագայի մէջ հանգիստ
կրնայ ըլլալ, աշակերտները յա-
ջողի են կամ ոչ՝ բնաւ կարեւո-
րութիւն չունի: Գաստիարակը ա-
շակերտին առեւած պատագրանին
վրայ չէ որ կը չափուի, ալ նոյն
իսկ իր գէպի աշակերտը ուղղած
մէկ քանի հարցմանց եղանակէն:

Պ. Պիոն, ինչպէս գիտէք ա-
մենէն նախնական կրթարաններէն
էն բարձր համալսարաններու մէջ,
ամենէն կարող դասատուներու
գիմաց իսկ կը պատահին այս.
կերտներ, որք քննութեան պա-
հուն բերաններն ալ չեն կրնար

շարժել, իբր թէ ամբողջ տարե-
շրջանի մէջ մէկ անգամ եւթ ուն-
կընդրած չըլլային իրենց հրաշալի
դասատուն. ասկէ պէտք է հե-
տեւեցնել որ ուսուցիչը բոլորովին
կամ մասամբ մը կը կորսնցնէ իւր
արժանիքը, բնաւ երբեք, քանի
որ վերագրեալին կրնայ յաջողել
ուրիշ աշակերտ մը, որ իւր ճար-
տասանութեամբ առաջնորդ յիշո-
ղութիւնը անգամ կը ջնջէ մեր
միտքերէն: Իսկ հակառակ դասա-
տուի մը անվիճելի կարողութեան
երբ տեսնուի որ կարգի մը ամ-
բողջ աշակերտներն ալ անկարող
են պատասխանել. չէ՞ որ պիտի
մտածենք թէ՛ թէեւ ուսուցիչը
իւր ճիւղին մէջ կարող՝ սակայն
գործախտաբար դասի աւանդու-
թեան եղանակը կ'անպիտանայ:

Վերջապէս ինչ հեռուն ենթադրե-
րուք իբր քալ՝ հիւստ դասա-
տու մը ձեռ մասնագիտութեան
մէջ, երբ չար բախտին բերմամբ
նետուած ըլլալիք Աֆրիկէի խորե-
րէն մէկը կամ Հապէշիտանի մէկ
ուրիշ հեռաւոր անկիւնը հո՞ն դա-
սախօսելու համար եւ երբ Չեր ա-
շակերտներէն անանկ պատաս-
խանելը ընդունէիք որ՝ ձեռ ալ
մեր ալ սիրտը խառնուէր, կը
յուսայի՞ք ուրեմն որ Գուք նոյն
կարող անձը ըլլալէ դադարէիք:

Գալով ձեռ էն վերջի յօդուա-
ծին, գրեթէ անոր ամեն կէտերն
ալ ինձի չի վերաբերելուն չի պի-
տի ուզեմ պատասխանել. Գուք
անոր մէջ բացատրած էիք յիշո-
ղութեան ինչ ըլլալը, կէս մըն ալ
անոր ուղղոյ մէջ հաստատուած
պահուն հոն ինչ երեւոյթներ կամ
փիլիսոփայի փոփոխութիւններ անց-
նիլ դառնալը, զայն դիւրին ստա-
նալու համար պէտք եղած միջոց-
ները, դաստիարակութեան ար-
րուեստին փափկութիւնը ու ասոր
բժշկութեան քով ունեցած կարե-
ւորութիւնը եւն. վերջապէս բա-
ներ որոնցմէ շատ աւելի ընդար-
ձակը գրուած կայ զանազան գր-
քերու մէջ երբ ուզենք զանոնք
թղթատել ու թարգմանել մեր
թերթերուն համար:

Առանց գիտնալու որ մանուկն
նախապէս սերտած մէկ գր-
քին յիշողութիւնը կեղծ թէ
ճշմարիտ յիշողութիւն պէտք էր
նկատել (ինչպէս դուք ըսած էք)
կը կրկնեմ թէ՛ յիշողութիւնը ըլ-
լայ կատարեալ կամ ոչ, իւր տեղը
ունի երախային ուղեղին մէջ:
Ուրեմն հաւատարմ կրնանք ըլլալ
որ երախան ալ պարտի մշակել
իւր յիշողութեան կարողութիւնը,
յամբ ու մեղմ ընթացքով մը,
մինչեւ որ իւր կատարելութեան
հասնի:

Սա ալ ճշմարիտ է որ՝ որպէս
զի յիշողութիւն մը բաւական հաս-
տատ հիմ բունէ մեր զիտուն մէջ
անգամ մը զայն կատարեալ ու-
շագրութեամբ ընդունել յետոյ,
պէտք է վրայէն բաւական ժամա-
մանակ անցնիլ ու վերջը կրկին
զայն յիշել: Եւ արդէն քննութիւն
մը ըլլայ՝ հրապարակային կամ ոչ
այս նպատակին ալ կը ծառայէ:

Մէկ խօսքով Պարոն, ինչո՞ւ
ապագային ըլլուելիքն վրայ այժ-
մէն վճիռներ արձակենք, եկէք
դուք ալ հ'ա ալ խոստովանինք
որ քննութիւնները վերնալուին
խնդիրը դեռ շատ ջուր կը
վերցնէ:

Չարդար

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՆԵՐՈՅԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

Բ. ՏԱՐԵՇՐԱՆ

— — —

Վարժարան խիստ դժուարին պայ-
մաններու մէջ յաջողապէս բոլորելով իր
առաջին շրջանը, կը վերաբացուի յա-
ռաջիկայ Սեպտ. 1/13ին, աւելի լայն
ծրագրով մը ու չընթացաւորած նոր ու-
ժերով:

Կ'աւանդուին, բացի հայերէն, պու-
կարերէն ու ֆրանսերէն լեզուներէն՝
որոնք պարտաւորիչ են՝ նաեւ անգլի-
էրէն ու գերմաներէն կամաւոր:

Ուսումըով կ'աւանդուին նաեւ ծրա-
գրուած գիտութեանց բոլոր ճիւղերը,
գործնական ու փորձառական մէթոտով:
Դպրոցական առարկաներու անհրաժեշտ
հաւաքածոյ մը կը դիւրացնէ թէ՛ ու-
սուցչին եւ թէ՛ ուսանողին աշխատու-
թիւնները:

Չութակի եւ դաշնակի դասեր մաս-
նաւոր վճարումներով:

Աշակերտք եւ աշակերտուելիք պիտի
մասնակցին զրական, գիտական եւ ե-
րաժշտական երկկողմանեան, որոնք
պիտի կազմակերպուին յառաջիկայ շըր-
ջանին, յօդուա բարենպաստակ ձեռնարկ
ներու, եւ որոնք պիտի ծառայեն՝ մի-
եւնոյն ատեն իբր գործնական դասեր՝
վարժեցնելու ուսանողները հանրային
կեանքի պարտականութեանց:

Միջկրթական մարզանքներու համար
մասնաւորապէս պիտի ընտրուին անգ-
ղիական խաղեր, Դաւիթ վճարող ա-
շակերտները պիտի կրնան հետեւիլ նա
եւ թիավարութեան եւ նշանառու-
թեան փորձերուն:

Վարժարան հաստատուած ըլլալով
քաղաքին ամենէն մաքուր եւ օդաւորու-
մասին մէջ, կը լրացնէ առողջապահա-
կան ամեն պայմանները: Կարգապա-
հութիւն, մաքրութիւն, խնամուած
սնունդ եւ բժշկական կանոնաւոր այ-
ցելութիւնք առողջապահական լաւա-
գոյն վիճակ մը կապահովեն գիշերօթիկ
ուսանողներուն համար: Փափաքող ծը-
կողաց պատրաստ եմ տալ պատուաւոր
եւ հասկցող անձնաւորութիւններու
բացարձակ երաշխաւորութիւնը:

Գիշերօթիկ աշակերտուհիներու հա-
մար մասնաւոր չէնք յատկացուած է:

Ընդունելութեան պայմաններու եւ
աւելի ընդարձակ տեղեկութեանց հա-
մար՝ նամակով կամ անձամբ գիմել առ

Հիմնադիր-Տնօրէն

Հայկական Կրթարանի

ԿՐԹԵՄԻՏԻՍԵԿԵԱՆ

ԼՐԱՔԱՂ

Վեհ. Կաթողիկոսը մասնաւոր
կոնգրակով մը հրահանգ տուած է
Գէորգեան Ճեմարանի հաստատ-
ման քսանհինգամեայ յոբելեանը
տօնելու յառաջիկայ սեպտեմ. 25ին:

— Նիւ Եօրքի մէջ տրուած թա-
տերական ներկայացման արդիւնքը
40 անգլ. ոսկի Պատրիարքարան
զրկուած է սովեաներուն յատկաց-
ուելու համար:

— Ս. Էլմիստին Արարատ ամ-
սթիւնի յունիսի թիւին Սինօ.
դական արագրութեանց մէջ կը
կարդանք թէ Սինօզը յաջորդա-
բար վճար է մի քանի նոր ա-
մուսնալուծութիւններ:

— Բաղէշի առաջն. տեղապահ
Տ. Եղիշէ վ. Չիլիկիւրեան տեղա-

կան կառավարութեան վարչապետութեան ներքին և արտաքին հարցերու ղեկավարութեան ապակարգութեան ալիքն չի կրնալով տոկալ, իր հօտին թշուառութեանց ու հարստահարութեան վիճակին դարձան մը ընելու անկարող՝ վճռապէս հըրաժարելու ու վանք քաշուի կորոշէրայց Պատրիարքը կրկին կը պնդէ որ Եղիշէ վարդապետ շառունակէ իր պաշտօնը:

— Ռուսահայ դրամատէր Մանթաշեան, Պալթիան և ուրիշ մի քանի ազգայիններ առաջադրած ըլլալով կողմնակի մէջ առեւտրական ուսումնարան մը բանալ կառավարութեան արտօնութիւնը խնդրած էին, վերջին լուրեր կիմացնեն թէ Երեւանական նախարարութիւնը՝ կողմնակի առեւտրական պաշտօնատան միջոցաւ վաւերացուցեր է թիֆլիսի մէջ բացուելիք այդ վարժարանին հոգաբարձութեան պաշտօնը:

— Կիրակի օր վառնայի Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ հանգուցեալ Օր. Գաթէրինա Յրայդէրի. եկեղեցին խուռն բազմութեամբ լի էր, Անգլ. հիւպատոսն ալ ներկայ գտնուեցաւ:

— Բազարճըզէն մասնաւոր հեռագիր մը մեզ կ'իմացնէ թէ տեղւոյն ազգայնոց միաձայն հաւանութեամբ Օրմանեանի յիշատակութիւնը դադրած է:

— Երկուշաբթի օր վառնայի Կըրօզտի զբօսարանին մէջ տեղի ունեցաւ Աղլիկանց կրթարանի վիճակագրոյցներու բաշխման հանգէսը. հանգիստավայրը խուռն բազմութեամբ լեցուն էր, գեղեցիկ կտորներ արտասանուեցան ու երգուեցան. մանկապարտէզի պըզտիկներուն պարը սքանչելի էր:

— Պուրկաղէն մեղք կը գրեն թէ Ունճեան և իր արքանեակները նկատելով թէ կառավարութեան պաշտօնեաներէն պատուաւոր հայ մը պաշտպանած է բանտարկեալներու իրաւունքը և թաղ. խորհրդոյ պաշտօնական կնիքը կառավարութեանն առնելով յանձնած է նորընտիր թաղականութեան: Ուստի Ունճեանի համախոհները կը պատրաստուին նախարարութեան դիմելով այդ հայ պաշտօնեային պաշտօնազուրկ ընել տալու աշխատիլ:

Կ Ի Ր Ի Տ

Կիրիտտէն թիւրքիայա կիթմիշ օլան իսլամար թէքքար կէրի կէլմէյէ պաշխատըլար. իզմիրտէն կէլէն սօն վարօր 150 իսլամ կէրի կէթիրտի. պունլարըն էքսէրիսի Գանտիալը տըրլար. Գանտիալըլարա էն զիյատէ ֆանաթիք տիրէլէր՝ կէլէնլէրին ըիվայէթինէ կէօրէ. թիւրքիայա կիտէն կիրիտիլէր էկէր թիւրք հիւքիւմէթի մէնն իթմէզ իսէ կէրիտէ ավտէթ իտէ:

ճէք իմիշէր. թիւրքիատա թիւրքէր կիրիտիլէրէ բէք եիւզ վէրմէմիշէր:

Տիկէր թարաֆտան էրմէնիլէր տախի կիրիտէ թօրլանմայա պաշլամըլլար. հէր կիւն եէնի կէլէնէք էքսիք տէկիլ. պունլար ազ չօգ սէրվէթ սահիպի օլանլար օլուպ, ատանըն հէր թարաֆքընտա միւլըլէր սաթըն ալմագտա տըրլար. կէօրիւնտիկինէ կէօրէ պունլար տախի գալմագ նիյէթինտէ տիրէր:

Իւշիւնճի կալկասիատաքի Րոււլար տախի կիրիտէ կէլմէք թէչէպալիսինտէ տըրլար. զիրա Րուսիատա կիւն պէ կիւն միլլիյէթլէրին ղայպ իտէյօրլար: Պուլ Րոււլարըն մուրախասլարը կիրիտէ կէլմիշ օլուպ, պիրտէն հիւքէթ իշիւն հիւքիւմէթ իլէ միւլէքէրէ էլլէմէքտէ տիրէր. կիրիտիլէր մէմուրիլէթլէ պունլարը գապուլ իտէճէքլէր:

Սամօս ատապընտա էհալի արթմագտա իքէն, ատանըն գըտէսի ուֆագ օլտըղընտան օրատան տախի կիրիտէ կիթմէք իշիւն թասալկուրաթ վար տըր:

Նիհայէթ կիրիտ հիւքիւմէթինին գանընա կէօրէ, պիր գաշ սէնէ զարֆընտա ատանըն էհալիսի իքի գաթ արթաճագ վէ զըրաթ իշիւն ըչպէրլէր չօղալաճագ տըր:

Թաւն

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՅԷ

Պուրկարիտան թիւրքիա սինօրընը կէչմէք իսթէյէն չէթէլէրի մէնն էլլէմէք իշիւն Պուրկար հիւքիւմէթի իքթիլա իտէն հէր պիր թէտպիրի էլէ ալմըշ օլտըղընա տախի Մ. Կրէքօֆըն Պապը Ալիյի լիմէին իթմիշ պուլընտըղընը թիւրք հիւքիւմէթի քէնտի էլիլէրինէ պիլտիրմիշ տիր:

— «Գօրէսը. Բօլիթիք» շու եօլտա պիլտիրիյօր:

«Սթանպօլ բօլիս տախիէսի շու սըրա էն սըզը թէտպիրլէր էլէ ալմըշ տըր. Կէնճ-թիւրքլէրին էրմէնիլէր իլէ միւլթէթիք հարէքէթ իտէճէքլէրինտէն գօրգմագտա տըրլար: Սուլթանըն մահաֆըզլարընտան տէօրթ զապիթ՝ ասքէրի Երըտըլա գարշը թէչիլիք իթմիշ օլմագ թէօհմէթիլէ հապսօլընտըլար: Պուլ տէօրթ զապիթլէր տիրանը հարպ հուզուրընտա մուհաքէմէ օլընաճագլար:»

— «Գուրբիէ տէ Պալքան»ըն պէյանընա նազարէն, Պիլկրատտան կէլէն եօլճըլար չէհրին բօլիսլէր վէ զապիթիլէր իլէ իհաթէ օլընտըղընը պիլտիրիյօրլար:

— Րոււլ միլլէթինտէն Մըսըրտա սաքին Ժօրթ Ավէրով նամ զէնկին ախիւրէն վէֆաթ իթմիշ օլմաղլէ, միլլէթինէ մախսուս թէսիաթ խայլայրիլէ 17 միլիօն ֆրանք վախիլթ իթմիշ տիր: Մոււսլլէյհ

վէֆաթընտան էվլէլ տախի պիր չօգ մէպլաղ էնվաի թէէսիսաթա իհտա էլլէմիշ իտի:

— «Թայմըլըն Սթանպօլ մուխպիրինտէն ալտըղը մալիւմաթա կէօրէ, Սուլթանըն բէճասը իւզրէ, Սթանպօլտաքի ֆրանսըզ էլչէսի Մ. Անմեղեանը Ֆրանսատան իխրաճ իթմէք իշիւն սէօզվէրմիշ տիր: Մալիւմ օլտըղը իւզրէ Մ. Անմեղեան լա Հէյտէ Սուլթանա վէ թիւրք հիւքիւմէթինէ գարշը չէտիտ լիսանլէ պիր նուլթ իրատ իթմիշ տիր:

— «Նօվօէ վրէմիա» կաղէթասը մուֆտասալ պիր պէնտ նէշր իտէրէք, պաղը միւլահազաթը սիյասիլէ վէ վուգուաթը մատտիլէ տէրմիյան իլէ, Ալէմանիայը քէնտի իթթիֆագլարը տախիլինէ ալմագ Րուսիա վէ Ֆրանսա իշիւն թէմամըլլա իմքեանսըզ օլտըղընը, վէ էկէր պէօլլէ պիր չէյ վագը օլուր իլէ՝ պիննէֆա իթթիֆագը մէզքիւրը մահվ իթմէք թէհիլէքսինէ տիւշիւրիլէճէկինի, չիւնքի Րուսիա-Ֆրանսա իթթիֆագընըն էստա մագսէտլէրի՝ Ալմանիանըն մագսէտլէրինէ տապանը տապանընա զրտտ օլտըղընը իսպաթ իթմիշ տիր:

Մէզքիւր կաղէթանըն գալլին. ճէ, Ալէմանիա քէնտի միւլթէմիլիքիաթ ալալ վէ արգուլարընը իճրա իթմէք իշիւն տէյիլ, հագիգաթը հալտէ քէնտի էվրոքա բօլիթիգասընը իհթիյաճաթընը խօշնուտ իթմէք իշիւն պիր եագընլըք բէյտա իքմէկէ չալըշլօր: Ֆրանսա իլէ Րուսիանըն վագլիլա վէ թէհամմիլ իլէ իլէրուտէ հէր հալտէ իսթիհսալ իտէպիլէճէքլէրի պաղը ֆէվաիտ վէ մուհասսէնաթա մուհապիլ Ալէմանիա՝ էվրոքատա ճէպրէն ֆէվաիտը ճէսիմէ թալէպ իտէճէք, վէ պուլ ֆէվաիտ տօղրուտան տօղրույա օ իքի տէվլէթէ մուճիպը զարար ու զիյան օլաճագ տըր:

— Կիրիտ հիւքիւմէթի Տիյուլըն Ումուլիյէի Օսմանիյէ միւլթէտաիլ օլան Սուլթանըն իրատէսինին ահաքիւմընը գապուլ իթմէմիշ օլտըղընտան, մէզքիւր իրատէսինին միւլտիւրիլէթի տէօրթ տէվլէթլէրին էլիլէրինէ նօթալար վէրուպ, պուլ մէսէլէտէն տօլայը պիր գարար վէրիլմէսինի վէ պուլ եօլլէ կիրիտին իտարէի հաղըրէսինին մուհաֆագա օլընմասընը բէճա իթմիշ տիր:

— Յրաւագֆ. Յայք. կաղէթանըն Սթանպօլտան ալտըղը մալիւմաթա կէօրէ, Պապը Ալի էլիլէրէ այնը մաալտա նօթալար վէրուպ, Րոււլ, Սըրպ վէ Պուրկարլարտան միթէչէքիլ պիր չօգ չէթէլէրին Մաքէթնիտա վէ Եպիրոստա հաղըր պուլընտըզլարընը կէօսթէրէք, պուլ սէպէպտէն իլէրի կէլէճէք ուլկուլսըղըզլարա մէսուլ օլմայաճաղընը իսթար իթմիշ տիր:

— Պաղը ինկիլիզ կաղէթալարըն

պէյանընա պինտէն, ինկիլթէրա Ագասի Ծարգտա թիւսարէթ ու թէէսիլինի թէմին իթմէք մագսէտի իլէ Չին հիւքիւմէթինէ թէքլիֆ իթմիշ տիր քի Չին օլտուսընըն ըսլահը իշիւն իքթիլա իտէն զապիթանը պիլա իւճրէթ կէօնտէրսին վէ հէր խուսուտա մուլթէնէթ իթմէքտէն խալի գալմասըն վէ պունա մուհապիլ Չին, Ճարօն վէ ինկիլիզ տէվլէթլէրի պէյնինտէ պիր իթթիֆագ տագտ օլընսըն, ինկիլթէրանըն պուլ թէքլիֆինի Չին տէվլէթի գապուլ իթմիլէ մէյլ կէօսթէրմիշ օլուպ, շու սըրա Լօրտ Սալգպէրի իլէ Ճարօնիա գապինէսի արասընտա, պուլ խուսուտա տախի մուխապէրաթ ճէրէյան իթմէքտէ տիր:

ԲՈՒԼԻ ՔՕԼԷՔՍԻՕՆ

Բուլի սքանչելի քօլէքսիօն սը ծախու հանուած է, աւելի քան երկու հազար բուլբուլ, որոնց մէջ բազմաթիւ հազուագիւտներ. միայն քօլէքսիօնը առանց բուլի, կ'արժէ 50 ֆրանք:

Գնել փափաքողները դիմեն խմբագրութեան:

ԳԱՆԻՒԼԻ ՄԵՐ ՆՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՐ

Տես կարգաւ Երանցեան

Շուրիա Ապտ-էլ - Ազիզ, Եգիպտական թատրոնին մօտ ի Գահիլէ:

Հաճեցաւ ստանձնել «Իրաւունք» ի գործակալութիւնը, որ թէ բաժնեգիրները պիտի գանձէ և թէ ձեռքէ թերթ ծախել պիտի տայ:

ԱՊՕՆԷԼԷՐԻՍԻԶԷ

Կաղէթա պէտէլինի էլան էօ. տէմէմիշ օլան զաթլարըն պիլա. թէէլիլի պօրճլարընը իֆա իթմէլէրին բէճա իտէրիլ:

Քէօլլէրտէ սաքին օլան նապօնէլէրիմիզէ սուհրուլէթ օլմագ իւզրէ իսթար էլլէրիլ քի գասապալարա կիթմէլէրինտէ պիլէ օլան պօրճլարընը բօսթայա վիրմէք զահմէթինէ գաթլանմաղլար իսէ պարի աթիտէքի զաթլարա թէսիլմ իթսինլէր:

Սիլիստէտէ՝ Մ. Կարապետ Ուզուրեան Տօպրիլտէ՝ Մ. Նչան Գարբիլէեան Թուրքաքան՝ Մ. Յարութիւն Հաճեան Ռուսոնգաթա՝ Մ. Հրանտ Թիլիլիւնեան Բազկարատա՝ Մ. Եղիա Պապիկիան Շուրիա Մ. Սողոմոն Պօյաճեան Բօսթաքաթա՝ Մ. Յակոբ Սինանեան Պալըզգաթա՝ Մ. Արմենակ Բէհլիվանեան Ֆիլիպէաէ՝ Մ. Տիգրան Պէնլեան Սիլիվէտէ՝ Մ. Խալիկ Թուհաֆեան Կէօստէնճէտէ՝ Մ. Նիքսէս Տէօվլէթեան

Մ. ԹԻԻԹԻԻՆՃՆ. ԵՒ ՐՆԿ. Ի ՌՈՒՍՃՈՒԳ

Կը վաճառէ Սօֆիա քաղաքի վիճակահանութեան տոմսակները Բ. չրճանի համար:

Ուրիշ քաղաքներէ և նոյն իսկ օտար երկրներէ եղած յանձնարարութիւններ փուլթով և ճշդութեամբ կը կատարուին:

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ